

ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՅ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Այս դասի (Նախաբան+մոտիվացնող
ներածական տեսակյութ+դասի
տեքստ+բառարան+ինքնաստուգիչ հարցեր)
յուրացման համար անհրաժեշտ է
240 րոպե / 4 ժամ:

ՆԱԽԱԲԱՆ

Առաջարկվող դասընթացը նախատեսված է դատավորների համար: Այն նվիրված է 2018 թվականի փետրվարի 9-ին ընդունված Հայաստանի Հանրապետության նոր քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) ներկայումս արդիականություն վայելող այնպիսի հարցերի լուսաբանմանը, որոնք Հայաստանի քաղաքացիա-դատավարական օրենքում կարգավորվել են նորովի կամ որոշակի առումով նորույթ են:

Դասընթացն ամփոփում է Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկի (EBRD) և Իրավունքի միջազգային զարգացման կազմակերպության (IDLO) կողմից համատեղ իրականացվող «Հայաստանում դատական ներուժի զարգացում Զաղաքացիական դատավարության նոր օրենսգիրքը» ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արդարադատության ակադեմիայի հետ համագործակցությամբ 2019-2020 թթ. ընթացքում դատավորների համար կազմակերպված թվով երեք դասընթացների թեմատիկ նյութերը: Վերջիններս նախապատրաստվել և հիշյալ դասընթացների մասնակիցներին են տրամադրվել Օրենսգրքի մշակման աշխատանքային խմբի անդամներ Սերգեյ Մեդրյանի (ԵՊՀ), Գոռ Հակոբյանի (Վճռաբեկ դատարանի դատավոր), Տիգրան Մարկոսյանի (ԵՊՀ), Արսեն Մկրտչյանի (Վերաքննիչ դատարանի նախագահ), Տարոն



Մինչև 10 րոպե

Նազարյանի (Վերաքննիչ դատարանի դատավոր),
ինչպես նաև ծրագրի միջազգային գործընկերներ՝
պրոֆ. Սրդան Սիմաչի (Խորվաթիայի Բարձրագույն
առևտրային դատարանի դատավոր) և պրոֆ. Ալան
Ուզելաչի (Խորվաթիա, Չագրեբի համալսարան)
կողմից:

Սույն դասընթացի թեմատիկան ներառում է
այն հիմնական ուղղությունները, որոնցով նոր
դատավարական օրենսդրության շրջանակներում
փորձ է կատարվել բարձրացնելու արդարադատության
արդյունավետությունը: Այդպիսիք են.

1. գործը դատաքննության նախապատրաստելու փուլը և
դատարանի կողմից ընդունվող միջանկյալ դատական
ակտերը,
2. վեճերի լուծման այլընտրանքային միջոցներին առնչվող
կարգավորումները
3. պարզեցված ընթացակարգերը,
4. կորպորատիվ և առանձին աշխատանքային վեճերի
լուծման առանձնահատկությունները:

Մասնակցելով դասընթացին, ուսումնասիրելով
առաջարկվող լրացուցիչ նյութերը և պատասխանելով
ինքնաստուգիչ հարցերին՝ Դուք կկարողանաք՝

- պլանավորել և ակտիվորեն կառավարել գործը
դատաքննության նախապատրաստելու փուլը՝
հստակ գիտակցելով գործի նախնական լուծման
ընթացքում դատարանի առաքելությունը.
- սահմանազատել այն գործերը, որոնցով նախնական
դատական նիստ նշանակելը պարտադիր է, այն
գործերից, որոնց շրջանակներում նախնական դատական
նիստի կառուցակարգի կիրառումը դատարանի
հայեցողական լիազորություն է.
- մատնանշել նախնական դատական նիստի ընթացքում
կատարվող դատավարական գործողությունների

նպատակները, ծավալը և բովանդակությունը.

- ճիշտ կազմակերպել ապացույցները նախնական դատական նիստում հավաքելու, դրանց վերաբերելիությունը և թույլատրելիությունը գնահատելու գործընթացը.
- վեր հանել այն իրավիճակները, երբ վարույթի ընթացքում հակընդդեմ հայց չներկայացնելը պատասխանողի համար կարող է առաջացնել անբարենպաստ հետևանքներ.
- սահմանազատել եզրափակիչ և միջանկյալ դատական ակտերը՝ բացահայտելով վերջիններիս ձևին, բովանդակությանը, ներկայացվող պահանջները և բողոքարկելիության հիմունքները.
- պարզաբանել վեճերի լուծման այլընտրանքային միջոցների դերը և նշանակությունը՝ հստակ ցույց տալով դրանց վերաբերյալ համապատասխան համաձայնության ազդեցությունը դատական վարույթի վրա.
- ներկայացնել արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու, արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու, արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու վերաբերյալ դիմումներով վարույթների առանձնահատկությունները.
- որոշել այն գործերի շրջանակը, որոնցով մեծ է վեճը հաշտությամբ ավարտելու հնարավորությունը՝ ցույց տալով այն չափորոշիչները, որոնցով դատարանը կարող է վեր հանել կողմերի շահերի ընդհանրությունը, և այն դատավարական հնարքները, որոնցով այդպիսի ընդհանրություն ունեցող կողմերը կարող են մղվել հաշտության.
- սահմանազատել Օրենսգրքով նախատեսված պարզեցված ընթացակարգերը՝ հստակ պատկերացում ունենալով այն մասին, թե տվյալ հանգամանքներում այդ վարույթներից որն է ենթակա կիրառման.
- լուսաբանել այս կամ այն պարզեցված ընթացակարգի շրջանակում կատարվող դատավարական

գործողությունների ծավալը և բովանդակությունը.

- ներկայացնել հատուկ հայցային վարույթի կարգով քննվող աշխատանքային վեճերը՝ պարզաբանելով դրանց հարուցման, նախապատրաստման և քննության առանձնահատկությունները.
- պլանավորել առանձին աշխատանքային վեճերի քննությունը՝ հստակ գիտակցելով դրանց շրջանակում դատարանի առաքելությունը և «ի պաշտոնե» գործելու սահմանները.
- ներկայացնել հատուկ հայցային վարույթի կարգով քննվող կորպորատիվ վեճերի շրջանակը, վեճն այդպիսին ճանաչելու չափանիշները.
- պլանավորել առանձին կորպորատիվ վեճերի քննությունը՝ հստակ գիտակցելով դրանց շրջանակում դատարանի և այն իրավաբանական անձի առաքելությունը, որի առնչությամբ գործը քննվում է դատարանում:

Դատերի յուրացման համար անհրաժեշտ են իրավագիտության, մասնավորապես՝ քաղաքացիական դատավարության ոլորտի հիմնարար գիտելիքներ:

Գործը դատաքննության նախապատրաստելիս վարույթի ակտիվ կառավարումը և պլանավորումը: Նախնական դատական նիստ նշանակելը, նախնական դատական նիստում լուծման ենթակա հարցերի շրջանակը

Դաս 1

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ
(Հասանելի է Արդարադատության ակադեմիայի կայքի հեռաուսուցման բաժնում):



Մինչև 5 րոպե

Նախնական դատական նիստը գործը դատաքննության նախապատրաստելու փուլի առանցքային տարրն է:

Քաղաքացիական դատավարությունում նախապատրաստական փուլի նպատակը, ընդհանուր առմամբ, դատաքննությանը (հիմնական նիստին) նախապատրաստվելն է: Ընդ որում, նախապատրաստական փուլի նպատակը միայն տեխնիկական գործառույթների իրականացումը չէ: Ընդհակառակը, քաղաքացիական դատավարության հիմնական նիստի մոդելի կիրառման դեպքում նախապատրաստական ընթացակարգը թույլ է տալիս բացահայտել (որոշակիացնել) վեճի առարկան, կոնկրետացնել կիրառելի իրավունքը, կենտրոնացնել ու ամփոփել

Ուշադրությամբ կարդացե՛ք տեքստը (օգտվելով բառարանից) և այն յուրացնելուց հետո միայն անցե՛ք ի ն ք ն ա ս ու լ գ ի չ հարցերին:



Մինչև 170 րոպե

հասանելի փաստական և ապացուցողական նյութը: Ընդ որում, այս ամենը ենթադրում է, մի կողմից, դատարանի կողմից գործի ակտիվ կառավարում, կողմերի մրցակցությանն օգտակար և թույլատրելի միջամտություն, մյուս կողմից՝ կողմերի հետ դատարանի և կողմերի փոխհամագործակցություն: Դատավորի դերն այս մոդելի դեպքում պարզապես ապացույցներ հավաքելուն պասիվ հետևելը չէ, սակայն միևնույն ժամանակ այն չի ենթադրում ապացույցների հավաքագրմանը ակտիվ ներգրավվածություն: Ընդհակառակը, դատավարության նախապատրաստական փուլում դատավորը կողմերին օգնում է հստակեցնել, թե որոնք են ամենակարևոր իրավական և փաստական հանգամանքները, հարթեցնել թյուրըմբռնումները և առանձնացնել հասանելի և վերաբերելի ապացույցները:

Հաջող նախապատրաստական փուլի հիմքը գործի ակտիվ կառավարումն է:

Անդրադառնալով գործը դատաքննության նախապատրաստելու փուլի նշանակությանը՝ Վճռաբեկ դատարանն իր մի շարք որոշումներում արձանագրել է, որ գործը դատաքննության նախապատրաստելը՝ որպես քաղաքացիական դատավարության ինքնուրույն և պարտադիր փուլ, արդարադատության արդյունավետության, անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների լիարժեք իրացման համար պայմաններ ապահովող ինստիտուտ է, որը **նպատակաուղղված է ապահովելու գործի արդյունավետ քննությունը:**

Դեռևս ՀՀ 1998թ. քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ նախկին օրենսգիրք) գործողության շրջանում Վճռաբեկ դատարանը նշել է, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի նպատակը քաղաքացիական գործի արդյունավետ

քննության ապահովումն է, և նշված նպատակի իրականացումը պայմանավորված է դատավարության այս փուլի խնդիրների ճիշտ իրականացմամբ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ քաղաքացիադատավարական օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել գործը դատաքննության նախապատրաստելու փուլի հետևյալ հիմնական խնդիրները՝

- վիճելի իրավահարաբերության բնույթը և կիրառման ենթակա օրենսդրությունը որոշելը,
- դատավարության մասնակիցների կազմը ճշտելը և նրանց մասնակցությունն ապահովելը,
- գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները (ապացուցման առարկան) որոշելը,
- ապացույցների բավարար համակցության ձևավորումը (ապացույցների կենտրոնացումը) ապահովելը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլի առանցքային տարրը նախնական դատական նիստն է. այն գործը դատաքննության նախապատրաստելու այնպիսի իրավական կառուցակարգ է, որն ապահովում է դատավարության քննարկվող փուլի հիմնական խնդիրների լուծումը, գործը դատաքննության նախապատրաստելուն ուղղված գործողությունների զգալի մասի իրականացումը¹:

Չարկ է նշել, որ նախնական դատական նիստը չի նույնանում նախապատրաստական փուլի հետ. դրանք տարբեր հասկացություններ են: Նախնական դատական նիստ հրավիրելը և անցկացնելը բազմաթիվ

¹Տես՝ թիվ ԵԿԴ/0930/02/13 քաղաքացիական գործով 22.04.2016 թ. և թիվ ԳԴ4/0504/02/14 քաղաքացիական գործով 22.04.2016 թ. որոշումները:

հնարավոր նախապատրաստական գործողություններից են: Նախնական նիստից դուրս դատարանը ևս կատարում է նախապատրաստական գործողություններ (օրինակ՝ կիրառում է հայցի ապահովման միջոցներ, ապահովում է ապացույցներ, գործին մասնակցող անձանց ուղարկում է հայցադիմումի և դրանկից փաստաթղթերի պատճենները, ընդունում է հայցադիմումի պատասխանը, այն ուղարկում է հայցվորին, ծանուցում է գործին մասնակցող անձանց դատական նիստի ժամանակի և վայրի մասին և այլն): Միևնույն ժամանակ հարկ է նկատել, որ մի շարք վարույթներ էլ իրականացվում են առանց նախնական դատական նիստ հրավիրելու:

Հիմնական նիստի մոդելը նախապատրաստական փուլում պահանջում է այնպիսի ակտիվ դատարան, որն ակտիվորեն ներգրավված է գործի կառավարման և որոշակիացման, և այսպիսով՝ նաև հետագա զարգացման գործում: Այնուամենայնիվ, դատավորի դերն այստեղ ինկվիզիցիոն չէ: Կողմերն են պատասխանատու վերաբերելի փաստարկների և ապացույցների ներկայացման համար: Չնայած նրան, որ դատարանն է որոշում, թե ինչ է պահանջում օրենքը (juranovitcuria), կողմերն են պարտավոր ներկայացնել կիրառելի իրավական նորմերի վերաբերյալ փաստերն ու փաստարկները: Դատավորը պետք է հավասարակշռություն ապահովի կողմերին առավել քիչ վերաբերելի ապացույցների և փաստերի առանձնացման հարցում ակտիվորեն օգնելու և դատավարության ընթացակարգում հրամայական դեր չստանձնելու միջև: Դատարանի այս դերն էականորեն տարբերվում է ինչպես ընդհանուր իրավունքի երկրներում ընդունված դատարանի ավանդաբար պասիվ դերից, այնպես էլ քաղաքացիական իրավունքի համակարգում դատարանի ավանդաբար

ակտիվ, ինկվիզիցիոն դերից:

Քաղաքացիական դատավարությունում հիմնական նիստի կիրառման, դատարանի՝ վարույթն ակտիվ կառավարելու և կողմերի հետ համագործակցության վրա հիմնված մոդելն իր արտացոլումն է գտել քաղաքացիական դատավարության վերաբերյալ մի շարք միջազգային փաստաթղթերում:

Այսպես, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ 1984 թվականի փետրվարի 28-ի No. R (84) 5 հանձնարարականի հավելվածով ամրագրված 3-րդ սկզբունքը սահմանում է. «Դատարանը պարտավոր է, առնվազն նախնական դատական նիստի ընթացքում, բայց եթե հնարավոր է, դատավարության ողջ ընթացքում, ակտիվ դեր ունենալ դատավարության արագ առաջընթացի համար՝ հարգելով կողմերի իրավահավասարության սկզբունքը: Դատարանը, մասնավորապես, պետք է լիազորված լինի կողմերին կարգադրել ներկայացնել անհրաժեշտ պարզաբանումներ, ներկայանալ դատական նիստին, բարձրացնել իրավունքի հարցեր, պահանջել ապացույցներ՝ հատկապես այն գործերով, երբ բացի երկու կողմի շահից շոշափվում են նաև այլ շահեր, վերահսկել ապացույցների հավաքագրման գործընթացը, բացառել այնպիսի վկաների հարցաքննությունը, ում հավանական ցուցմունքը գործին կլինի ոչ վերաբերելի, սահմանափակել վկաների թիվը: Այս լիազորությունները պետք է իրականացվեն՝ առանց շրջանցելու դատավարության բուն օբյեկտը»:

Եվրոպական հանձնաժողովի կողմից Եվրոպական միությունում քաղաքացիական դատավարության նվազագույն չափանիշների վերաբերյալ առաջարկություններով (2015/2084(INL)) Եվրոպական

խորհրդարանի 2017 թվականի հուլիսի 4-ի բանաձևի 9-րդ հոդվածով սահմանված են քաղաքացիական դատավարության ուղղորդման հիմնական սկզբունքները: Մասնավորապես, նորմը սահմանում է.

1. Անդամ պետությունները պետք է երաշխավորեն դատարանների կողմից քննվող գործերով դատարանի կողմից դրանց ակտիվ կառավարումը՝ վեճերի արդարացի և արդյունավետ լուծումն ապահովելու նպատակով, ինչպես նաև երաշխավորեն դրա իրականացումը ողջամիտ արագությամբ և ծախսերով՝ առանց ստորադասելու վեճի առարկան և ներկայացվող ապացույցները տնօրինելու կողմերի իրավունքը:
2. Դատարանը գործը պետք է կառավարի կողմերի հետ խորհրդակցելով: Մասնավորապես, գործի ակտիվ կառավարումը կարող է ներառել.
 - ա) դատավարության ընթացքում կողմերի համագործակցության խրախուսումը, բ) փաստերը դատավարության վաղ փուլում պարզելը, գ) որոշելը, թե որ փաստերն են պահանջում ամբողջական քննություն և կանխորոշում այլ հարցերի լուծումը, դ) որոշել հարցերի լուծման հերթականությունը, ե) օգնել կողմերին լուծել վեճի մի մասը կամ ամբողջ վեճը, զ) սահմանել ժամանակացույցներ, է) ուսումնասիրել հարցի առավելագույն թվով շատ տեսանկյունները, ը) գործը քննել առանց կողմերի անձամբ ներկայանալու, թ) օգտվել հասանելի տեխնիկական միջոցներից:

2005 թվականին Չռոմում ընդունված Քաղաքացիական դատավարության անդրազգային ՈւՆԻԴՐՈՒԱ սկզբունքների 14-րդ սկզբունքը ևս ամրագրում է վարույթը կառավարելու դատարանի պարտավորությունը՝ նշելով.

«14.1. Դատավարության հնարավոր ամենավաղ փուլում դատարանը պարտավոր է ակտիվորեն

կառավարել գործը՝ իրականացնելով վեճի արդար, արդյունավետ և ողջամիտ արագությանը լուծմանը հասնելու հարցում իր ունեցած հայեցողությունը:

14.2. Դատարանը վարույթը հնարավորության սահմաններում պետք է կառավարի կողմերի հետ համագործակցելով:

14.3. Դատարանը պետք է սահմանի հարցերի լուծման հերթականությունը, ամրագրի դատավարության բոլոր փուլերի ժամանակացույց՝ ներառյալ ամսաթվերը և վերջնաժամկետները: Դատարանը պետք է ունենա այս ուղենիշների վերանայման հնարավորություն»:

Ուշագրավ է, որ քաղաքացիական դատավարության եվրոպական ՈւՆԻԴԴՈՒԱ կանոնների Նախագիծը (այսուհետ՝ Նաև «Նախագիծ») ևս պարունակում է դատարանի՝ գործն ակտիվ կառավարելու և կողմերի հետ համագործակցելու վերաբերյալ մի շարք դրույթներ: Ըստ Նախագծով ամրագրված 2-րդ կանոնի՝ կողմերը, նրանց ներկայացուցիչները և դատարանը պետք է համագործակցեն՝ խթանելու վեճի արդյունավետ, արդարացի և արագ լուծումը: Այս կանոնի մեկնաբանություններում ամրագրված է, որ կողմերի և դատարանի համագործակցության պարտականությունը, որը XIX դարից սկսած եվրոպական մի շարք երկրների քաղաքացիադատավարական օրենսդրությունում ամրագրված է եղել, իսկ մյուսներում ամրագրվել է արդեն XXI դարում, կարևոր առաջընթաց քայլ է քաղաքացիական դատավարությունը մրցակցային և ինկվիզիցիոն ձևերը տարանջատելու համակարգում: Այն կոչված է Նաև հաղթահարելու պատմական այս բաժանման հետևանքով քաղաքացիական դատավարության ներդաշնակեցման հարցում առաջացած խոչընդոտը:



Նախագծով ամրագրված են նաև համագործակցությունն ապահովելու առումով դատարանի մի շարք պարտականություններ, որոնցից ամենակարևորը դատարանին ընձեռված հնարավորությունն է՝ կողմերից պահանջելու որոշակի փոփոխություններ կատարել, երբ նրանք ինքնուրույն ձախողում են դա կատարելը², լաված լինելու կողմերի իրավունքի պահպանումը՝ դատարանի և կողմերի հետագա համագործակցության ապահովման նպատակով³:

Նախագծի 4-րդ կանոնն ամրագրում է վարույթի կառավարման դատարանի ընդհանուր պարտականությունը՝ նշելով. «Դատարանը պատասխանատու է վարույթի ակտիվ և արդյունավետ կառավարման համար: Դատարանը պարտավոր է երաշխավորել կողմերի իրավահավասարությունը և նրանց՝ հավասար վերաբերմունքի արժանանալը»: Այս կանոնի մեկնաբանություններում նշվում է, որ ակտիվ կառավարման արդյունավետ իրագործման հարցում շատ կարևոր է դատավարության ընթացքում կողմերի՝ իրենց պարտականությունների կատարման պատշաճությանը հետևելու դատարանի լիազորությունը: Նախագծի 3-րդ՝ գործի կառավարումը վերտառությամբ մասում, ամրագրված է, որ դատարանի և կողմերի համագործակցությունը, այնուամենայնիվ, չի ենթադրում, որ կողմերը պարտավոր են դատարանին ներկայացնել ակնկալվող գործի բոլոր փաստերը և ապացույցները վարույթի սկզբից: Դատարանի հետ արդյունավետ համագործակցությունը և արդյունավետ կառավարումը պահանջում է դատարանի ու կողմերի հավաստիացում

² Տե՛ս կանոններ 4(3), 24(1), 25(3), 26(2), 33, 49(6) – (11), 53(3), 61(4), 62(2), 64(5), 92(2) և 218):

³ Տե՛ս կանոններ 11, 12(2), 13, 16(1), 24(3), 26(2), 28(2), 41(1), 50(1), 64(7), 92(2) և (4), 93, 96, 107(2), 186, և 201(3)):

առ այն, որ անհրաժեշտ նյութերը կներկայացվեն պատշաճ ժամկետում, որպեսզի դատարանը կարողանա պատշաճ բաշխել վարույթի ծանրաբեռնվածությունը:

Վարույթն ակտիվորեն ղեկավարելու դատարանի պարտավորության դրսևորում են հիմնական նիստին նախապատրաստվելու համար վարույթի կառավարման լուսմներ անցկացնելու վերաբերյալ կարգավորումները: Նախագծի 61-րդ կանոնը ամրագրում է. *«Վերջնական նիստին պատրաստվելու համար դատարանը կարող է իրականացնել վարույթի կառավարման նիստ, ինչպես նաև գործի առաջընթացին զուգահեռ՝ այլ նիստեր: Կառավարման նիստը կարող է անցկացվել ինչպես կողմերի ներկայությամբ, այնպես էլ էլեկտրոնային միջոցների կիրառմամբ: Այս նիստի ավարտից անմիջապես հետո դատարանը կողմերի հետ համագործակցելով պարտավոր է սահմանել հիմնական նիստի ժամանակացույց և վճռի հրապարակման հավանական օր: Ըստ անհրաժեշտության դատարանը կարող է կողմերին տալ հիմնական նիստին ու վճռին նախապատրաստվելու խորհուրդներ: Այդպիսի խորհուրդները, եթե դա հնարավոր է, պետք է տրվեն գործի կառավարման նիստի սկզբնական փուլում: Գործի կառավարման հրամանները պետք է տրվեն կառավարման նիստի ընթացքում կամ դրանից անմիջապես հետո»:* Կանոնի մեկնաբանություններում նշվում է, որ վարույթի նախնական կառավարման նիստը եվրոպական երկրների մեծ մասում դատավարության մաս է: Վարույթի ակտիվ և արդյունավետ կառավարման դատարանի պարտականությունն ընդունված է եվրոպական քաղաքացիադատավարական մշակույթում սկսած 1980-ական թվականներից: Այն ենթադրում է դատավարության ողջամիտ պլանավորում և

Ժամանակացույցի սահմանում վարույթի հենց սկզբից՝ կողմերի հետ համագործակցությամբ: Այս նիստը սովորաբար պետք է իրականացվի կողմերի կողմից դատավարական հիմնական փաստաթղթերի փոխանակումից հետո: Նիստը, սակայն, պարտադիր չէ և կարող է չիրականացվել, օրինակ՝ պարզ և փոքր հայցագին ունեցող գործերի դեպքում:

Անդրադառնալով քաղաքացիական դատավարությունում դատարանի ակտիվ դերի և նրա կողմից իրականացվող գործողությունների վերաբերյալ միջազգային փաստաթղթերին՝ անհրաժեշտ է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության 2018 թ. փետրվարի 9-ին ընդունված օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք) էապես բարձրացվել է նախնական դատական նիստին շանակությունը, դատարանին տրվել են կառավարման «ակտիվ» գործառույթներ ու անհրաժեշտ գործիքակազմ և վերանայվել են նախնական դատական նիստին նվիրված կարգավորումները:

Մասնավորապես՝

- նախնական դատական նիստը պարտադիր է ճանաչվել հայցային վարույթի բոլորգործերով.
- հստակ սահմանվել են նախնական դատական նիստի ընթացքում դատարանի կողմից կատարվող գործողությունները և դրանց կատարման հաջորդականությունը.
- սահմանվել են վարույթի ուղղվածության և բովանդակության վրա ազդող առանձին տնօրինչական գործողությունների կատարման ժամանակային սահմանափակումներ.
- սկզբունքի մակարդակի է բարձրացվել դատարանի պարտականությունը՝ դատավարական իրավիճակից ելնելով, գործին մասնակցող անձանց պարզաբանելու նրանց իրավունքները և պարտականությունները,

Նախագգուշացնելու դատավարական գործողությունները կատարելու կամ չկատարելու հետևանքների մասին, պայմաններ ստեղծելու գործի փաստական հանգամանքները պարզելու, ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու համար.

- Նախատեսվել է դատավարական իրավունքների չարաշահման առանձին դրսևորումներին հակազդելու որոշակի գործիքակազմ,
- Նախատեսվել են դատարանի «ակտիվ կառավարման» այլ գործառույթներ:

Նախ հարկ է անդրադառնալ քաղաքացիական դատավարությունում դատարանի **«ակտիվ կառավարման»** գործառույթների իրացմանը: Մրցակցային դատավարության պայմաններում հաճախ քննարկվում է դատարանի ակտիվ դերակատարության դրսևորման հարցը: Որպես կանոն, քաղաքացիական դատավարությունում որպես դատարանի ակտիվության դրսևորում է համարվում ոչ միայն դատավարության մասնակիցներին իրենց իրավունքների իրականացման հարցում օժանդակելը, այլև գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը պարզելու համար անհրաժեշտ նախադրյալներ ապահովելը⁴:

Ընդ որում, Օրենսգրքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսել է քաղաքացիական դատավարությունում դատարանի ակտիվ (օգտակար) միջամտության նախադրյալները: Այսպես, դատարանը, պահպանելով անկախություն և անաչառություն, վարում է դատավարությունը, անհրաժեշտության դեպքում օրենսգրքով սահմանված կարգով գործի

⁴ *Տէ՛ւ Փավլենկո Կ. Ա., Խամատովա Է. Բ., Цели, задачи и средства доказывания: специфика административного судопроизводства и гражданской процессуальной формы //Вестник Воронежского института МВД России, №. 3, 2015թ., էջեր 148-150:*

քննության ընթացքում գործին մասնակցող անձանց պարզաբանում է նրանց իրավունքները և պարտականությունները, նախագգուշացնում է դատավարական գործողությունները կատարելու կամ չկատարելու հետևանքների մասին, պայմաններ է ստեղծում գործի փաստական հանգամանքները պարզելու, ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու համար:

Ավելին, Օրենսգրքի տարբեր հոդվածներով ամրագրված է դատարանի կողմից՝ պարզաբանման լիազորությունների իրականացումը, ինչը հանդիսանում է դատարանի ակտիվ միջամտության դրսևորում: Այսպես, օրինակ, Օրենսգրքի 148-րդ հոդվածից բխում է, որ դատարանը գործին մասնակցող անձանց ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր կարող է պարզաբանել նրանց դատավարական իրավունքների և պարտականությունների մասին:

Այսպիսով, Օրենսգրքով երաշխավորված է դատարանի կողմից **«ակտիվ կառավարման»** գործառնությունների իրականացումը, ինչը կարևոր երաշխիք է վեճերի արդարացի և արդյունավետ քննությունն ապահովելու, ինչպես նաև կողմերի մրցակցությունն ու իրավահավասարությունը երաշխավորելու համար:

Նախնական դատական նիստի պարտադիրությունը:

Չարկ է նկատել, որ Օրենսգրքի 165-րդ հոդվածը հայցային բնույթի գործերով նախնական դատական նիստի պարտադիր անցկացմա նպահանջից բացառություն է նախատեսել միայն այնդեպքերի համար, երբ դատարանը գործը քննում է պարզեցված վարույթի կարգով կամ կիրառում է արագացված դատաքննություն:

Ինչ վերաբերում է դիմումի հիման վրա հարուցած հատուկ և ոչ հայցային այլ վարույթների կարգով քննվող գործերին, ապա Օրենսգրքի 165-րդ հոդվածի 2-րդ մասի ուսումնասիրությունը հանգում է հետևյալին.

- դատարանը, ելնելով գործի առանձնահատկություններից, իրավունք ունիմանգործը նշանակելու դատաքննության առանց նախնական դատական նիստ հրավիրելու, բացառությամբ Օրենսգրքով նախատեսված դեպքերի (ներկայումս Օրենսգրքով նախատեսված է այդպիսի միայն մեկ բացառություն, այն է՝ շարժական գույքը տիրազուրկ ճանաչելու և դրա նկատմամբ դիմողի սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ դիմումի քննությունը, որի ընթացքումգործի նախապատրաստումը դատաքննության իրականացվում է նախնական դատական նիստում),
- մինևույն ժամանակ օրենսդիրը դատարանին իրավունք է վերապահել դիմումի հիման վրա հարուցված գործով դատաքննության ընթացքում ըստ անհրաժեշտության կատարելու Օրենսգրքի 167-րդ հոդվածում նշված գործողությունները:

Ակնհայտ է, որ դիմումի հիման վրա հարուցված հատուկ և ոչ հայցային այլ վարույթների կարգով քննվող գործերով նախնական դատական նիստ հրավիրելն օրենսդիրը, որպես ընդհանուր կանոն, դիտարկում է իբրև դատարանի հայեցողական իրավունք: Այս կապակցությամբ իր արդիականությունը չի կորցրել Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ նախնական դատական նիստ հրավիրելու «հայեցողությունը» իրացնելիս, նման նիստ հրավիրելու նպատակահարմարության հարցը լուծելիս դատարանը պարտավոր է՝

- հաշվի առնել կոնկրետ գործի փաստական

հանգամանքները և առանձնահատկությունները,

- գնահատել առանց նախնական դատական նիստ հրավիրելու գործը դատաքննության նախապատրաստելու փուլի նպատակն իրականացնելու և տվյալ փուլի խնդիրները լուծելու հնարավորությունը (տե՛ս թիվ ԵԿԴ/0930/02/13 քաղաքացիական գործով 22.04.2016թ. և թիվ ԳԴ4/0504/02/14 քաղաքացիական գործով 22.04.2016 թ. որոշումները):

Շարադրվածից բխում է, որ, չնայած օրենքը ոչ հայցային վարույթներով նախնական դատական նիստ հրավիրելը դիտարկում է որպես դատարանի հայեցողական իրավունք, առանձին դատավարական գործողությունների կատարման կարգը պահանջում է դրանք կատարել բացառապես դատական նիստում՝ կողմերի մրցակցային իրավունքների իրացման պայմաններում: Ուստի նման գործողություններ կատարելու անհրաժեշտության դեպքում դատարանը պարտավոր է նշանակել նախնական դատական նիստ: Այսպես, փորձաքննություն նշանակելու, դատական նիստում ապացույցներ ապահովելու, ապացուցման առարկան որոշելու, ապացուցման բեռը բաշխելու և մի շարք այլ հարցերը չեն կարող լուծվել առանց գործին մասնակցող անձանց կարծիքները, առաջարկությունները և փաստարկները լսելու: Վերջիններիս լսելու միակ դատավարական ձևը դատական նիստն է, ուստի դատարանը պարտավոր է նշված գործողությունները կատարելու հարցը լուծելու նպատակով հրավիրել նախնական դատական նիստ:

Նախնական դատական նիստ նշանակելու համար Օրենսգրքի 166-րդ հոդվածով նախատեսված են որոշակի **պայմաններ**: Դրանք են՝

1. հայցադիմումի պատասխան ստանալը, կամ

2. պատասխան չներկայացվելու դեպքում՝ այն ուղարկելու համար սահմանված ժամկետն ավարտվելը, կամ
3. եզրափակիչ դատական ակտի բեկանումից հետո վերադաս դատարանից համապատասխան գործն ստանալը:

Ընդ որում, նախնական դատական նիստ նշանակելու մասին որոշումը պետք է կայացվի վերը նշված նախապայմաններից ցանկացածն ի հայտ գալու օրվան հաջորդող եռօրյա ժամկետում, իսկ նախնական դատական նիստը պետք է հրավիրվի այն նշանակելու մասին որոշման կայացմանը հաջորդող երեսօրյա ժամկետում:

Նախնական դատական նիստ նշանակելու ոչ պակաս կարևոր պայման է **գործով պարզեցված վարույթ, արագացված դատաքննություն կիրառելու, վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու հիմքերի բացակայությունը**, քանի որ վերջիններիս առկայության պարագայում դատարանը պետք է ոչ թե նշանակի նախնական դատական նիստ, այլ նշված եռօրյա ժամկետում որոշում կայացնի համապատասխան պարզեցված ընթացակարգը կիրառելուկամ վարույթը համապատասխան եղանակով ավարտելու մասին:

Այլ կերպ ասած՝ վարույթի պլանավորմանն ուղղված առաջին քայլը ենթադրում է գործը դատաքննության նախապատրաստելու համապատասխան եղանակի ընտրություն՝ կախված վարույթի տեսակից և ստեղծված դատավարական իրավիճակից: Սխեմատիկ նշվածը կարելի է պատկերել հետևյալ կերպ.



Գործը Դատաքննության Նախապատրաստելու Եղանակները Եվ Նախնական դատական Նիստ Նշանակելու այլընտրանքները



Հայցադիմումն ընդհանուր հայցային վարույթի կարգով վարույթ ընդունելուց և/կամ պատասխանողի դիրքորոշումը պարզելուց հետո դատարանը պետք է որոշի գործի հետագա ընթացքը՝

- ➔ *Նշանակի նախնական դատական նիստ*
- ➔ *Կիրառի պարզեցված վարույթ*
- ➔ *Կիրառի արագացված դատաքննություն*
- ➔ *Ավարտի Վարույթն առանց վեճն ըստ Էության լուծելու*

Նախնական դատական նիստում լուծման ենթակա հարցերի շրջանակը:

Օրենսգրքի 167-րդ հոդվածը մանրամասն, սակայն ոչ սպառիչ, սահմանում է այն հարցերի շրջանակը, որոնք առաջին ատյանի դատարանն իրականացնում է նախնական նիստում:

Ի լրումն, Օրենսգրքից շարք հոդվածների շրջանակներում կարգավորել է նաև երրորդ անձանց ներգրավելու (37-38 հոդվ.), նախնական դատական նիստում հայցային վաղեմության ժամկետի լրանալու փաստը վկայակոչելու (168 հոդվ.), հայցի առարկան և հիմքը փոփոխելու (170 հոդվ.), ոչ պատշաճ պատասխանողին փոխարինելու (172 հոդվ.), նոր

պատասխանող ներգրավելու (173 հոդվ.), հայցն առանց քննության թողնելու (180-181 հոդվ.), գործի վարույթը կարճելու (182-183 հոդվ.), նախնական դատական նիստում պարզեցված ընթացակարգ կիրառելու (292-294, 297-301, 303-306 հոդվ.) և մի շարք այլ հարցեր, որոնց պատշաճ լուծումն էական նշանակություն ունի գործը դատաքննության նախապատրաստելու փուլի առջև դրված միջանկյալ և հիմնական նպատակներին հասնելու համար:

Չարկ է նշել, որ Օրենսգրքի 167-րդ հոդվածում թվարկված նախապատրաստական դատավարական գործողությունները կատարվում են օրենքով կանխորոշված հաջորդականությամբ: Ընդ որում, դրանց որոշակի համակցությունն ուղղված է նախնական դատական նիստում դատարանի առջև դրված կոնկրետ փոխկապակցված և փոխայմանավորված խնդիրների (միջանկյալ նպատակների) լուծմանը: Ընդ որում, Օրենսգրքի 167-րդ հոդվածով նախատեսված դատավարական գործողությունները թվարկված են այն տրամաբանությամբ, որ հաջորդող դատավարական գործողությունների պատշաճ կատարումը և դատարանի առջև դրված միջանկյալ խնդիրների լուծումը (միջանկյալ նպատակին հասնելը) հնարավոր է բացառապես նախորդող գործողությունները բարեհաջող կատարելուց և դատարանի առջև դրված խնդիրները լուծելուց (միջանկյալ նպատակին հասնելուց) հետո:

Սխեմատիկ նշվածը կարելի է պատկերել հետևյալ կերպ.

Նախնական Դատական Նիստում լուծվող խնդիրները

- Վեճի էության, մասնակիցների և նրանց դիրքորոշումների, կիրառելի նորմերի պարզում
- Վեճը հաշտությամբ ավարտելու հնարավորության պարզում
- Հայցային վաղեմություն կիրառելու հարցի լուծում
- Վարույթը տվյալ փուլում ավարտելու հարցի լուծում
- Պարզեցված ընթացակարգ կիրառելու հարցի լուծում

ՆՊԱՏԱԿ

Վարույթը տվյալ փուլում ավարտելու կամ պարզեցված ընթացակարգ կիրառելու հիմքերի բացակայության պարագայում գործի ըստ էության լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակի որոշում և դրանց ապացուցման գործընթացի կազմակերպում, նոր փաստական նյութ ներկայացնելու իրավունքի սահմանափակում:

- Գործով ապացուցման պարտականության բաշխում
- Ապացույցների հավաքում և բացահայտում
- Ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության հարցի լուծում
- Ապացույցների հետազոտման հաջորդականության սահմանում

ՆՊԱՏԱԿ

Ապացույցների բավարար համակցության ձևավորում (կենտրոնացում), դատաքննությամբ հետազոտման ենթակա ապացուցողական նյութի շրջանակի որոշում, նոր ապացույցներ ներկայացնելու իրավունքի սահմանափակում:

Այժմ, անդրադառնանք նախնական դատական նիստում լուծման ենթակա այն հարցերի քննարկմանը, որոնք ունեն առանցքային նշանակություն գործը դատաքննության նախապատրաստելու փուլի համար, մասնավորապես՝ վարույթի պատշաճ պլանավորման և կառավարման տեսանկյունից:

Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

Գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի, ապացուցման ենթակա փաստերի (ապացուցման առարկայի) և ապացուցման ոչ ենթակա փաստերի

շրջանակը որոշելը, ինչպես նաև ապացուցման ենթակա փաստերի ապացուցման պարտականությունը գործին մասնակցող անձանց միջև բաշխելն իրականացվում է որոշակի դատավարական կարգով, որը պայմանավորված է վարույթի տեսակով և գործի քննության եղանակով:

Հայցային վարույթի գործերով քննարկվող դատավարական գործողությունների պատշաճ կատարումն օրենսդիրը դիտարկել է որպես նախնական դատական նիստի կենտրոնական խնդիրներից մեկը, որի լուծումը ձևակերպվում է **ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ: Հայցային վարույթի գործերով նման որոշման կայացումն այլընտրանք չունի⁵ :**

Ընդ որում, հայցային վարույթի ցանկացած գործով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը կայացնելուց առաջ դատարանը պարտավոր է նախնական դատական նիստում գործին մասնակցող անձանց հետ քննարկել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի, այդ թվում՝ ապացուցման կարիք չունեցող փաստերի և ապացուցման ենթակա փաստերի շրջանակը, ապացուցման պարտականությունը գործին մասնակցող անձանց միջև բաշխելու հարցը և նրանց կողմից ապացույցներ և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու ժամկետը (ՔԴՕ 167 հոդ., մաս 1, կետ 7-9, 169 հոդ., մաս 1):

⁵ *Բացառություն են ՀՀ անօրինական տեղափոխված կամ ՀՀ-ում ապօրինի պահվող երեխայի վերադարձի վերաբերյալ հատուկ հայցային վարույթի կարգով քննվող գործերը (դրանք քննվում և լուծվում են տասնօրյա ժամկետում՝ առանց դատական նիստ հրավիրելու), ինչպես նաև այն հայցային գործերը, որոնք դատարանի որոշմամբ քննվում են պարզեցված ընթացակարգով:*

Օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հակընդդեմ հայցը վերադարձնելու կամ հակընդդեմ հայցի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ բողոք ներկայացվելու դեպքում ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը կայացվում է այդ բողոքի վերաբերյալ կայացված եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո: Նման նորմի գոյությունը պայմանավորված է նրանով, որ վերաքննիչ բողոքը բավարարելու և հակընդդեմ հայցը վարույթ ընդունելու վերաբերյալ վերաքննիչ դատարանի որոշումն օրինական ուժի մեջ մտնելու փաստի ուժով հակընդդեմ հայցի և դրա դեմ ներկայացվող առարկությունների հիմքերի հաշվին էականորեն ընդլայնվում է գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը, ինչն անխուսափելիորեն առաջացնում է հակընդդեմ հայցը ևս դատաքննության նախապատրաստելու, այդ թվում՝ հակընդդեմ հայցի և դրա դեմ ներկայացվող առարկությունների հիմքում ընկած փաստերի վերաբերելիությունը պարզելու և ապացուցման բեռը բաշխելու անհրաժեշտություն: Ուստի հակընդդեմ հայցը վերադարձնելու կամ հակընդդեմ հայցի ընդունումը մերժելու մասին որոշման դեմ բողոք ներկայացվելու դեպքում գործը քննող առաջին ատյանի դատարանը պետք է սպասի այդ հարցով վերաքննիչ դատարանի որոշման կայացմանը: Բողոքը մերժվելու պարագայում, ըստ էության, հաստատվում է հակընդդեմ հայցը վարույթ ընդունելու հիմքերի բացակայությունը, ինչը թույլ է տալիս դատարանին ձեռնամուխ լինելու հաջորդ դատավարական գործողության կատարմանը՝ ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշման կայացմանը: Սակայն եթե նշված բողոքը բավարարվում է, և ծագում է

ներկայացված հակընդդեմ հայցը վարույթ ընդունելու անհրաժեշտություն, ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը կարող է կայացվել հակընդդեմ հայցի հիմքերը և դրանք ապացուցելու բեռը կրող սուբյեկտների շրջանակը նախնական դատական նիստում քննարկելուց հետո⁶ :

Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշման կայացմամբ դատարանը լուծում է գործը դատաքննության նախապատրաստելու փուլի մի շարք խնդիրներ.

ա. եզրափակում է հայցի առարկան, դրա փաստական և իրավական հիմքերը, ինչպես նաև հայցի դեմ ներկայացված առարկությունների փաստական և իրավական հիմքերը պարզելուն ուղղված դատավարական գործողությունները՝ համապատասխանաբար սահմանափակելով գործին մասնակցող անձանց կողմից գործի շրջանակներում նոր պահանջներ և փաստական նյութ ներկայացնելու և ներկայացված պահանջներն ու փաստական նյութը փոփոխելու հնարավորությունը և կանխատեսելի դարձնելով հետագա դատավարական գործողությունների ուղղվածությունը, ծավալը և բովանդակությունը,

բ. որոշակիացնում է գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը՝ ուրվագծելով տվյալ քաղաքացիական գործով դատական ճանաչողության առարկան,

⁶Չարկ է նշել, որ Օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությունը եղել է Սահմանադրական դատարանի քննարկման առարկա: Տե՛ս Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ մասի և 140-րդ հոդվածի 4-րդ մասի՝ սահմանադրականը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով Սահմանադրական դատարանի 18.06.2019 թ. թիվ ՍԴՈ-1464 որոշումը:

- գ. գործին մասնակցող անձանց ցույց է տալիս գործի լուծման համար նշանակություն ունեցող այն փաստերի շրջանակը, որոնք ապացուցման ենթակա չեն, և այն փաստերի շրջանակը, որոնք ենթակա են ապացուցման (կազմում են գործով ապացուցման առարկան),
- դ. ապացուցման պարտականությունը բաշխելու ընդհանուր և հատուկ կանոնների կիրառմամբ գործին մասնակցող անձանց միջև բաշխում է գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի ապացուցման պարտականությունը՝ հստակորեն ցույց տալով այն փաստերի շրջանակը, որոնք ապացուցելու նպատակով նրանցից յուրաքանչյուրը պետք է ներկայացնի ապացույցներ և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ, և որոնք վիճելի մնալու բացասական հետևանքները կրելու է տվյալ անձը.
- ե. սահմանում է ի կատարումն ապացուցման պարտականության ապացույցներ և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու ժամկետ՝ ապահովելով գործը դատաքննության նախապատրաստելու փուլում կողմերի տիրապետության տակ գտնվող ամբողջ ապացուցողական նյութի ներկայացումը և միմյանց առջև բացահայտումը, ինչպես նաև ներկայացված (հավաքված) ապացուցողական նյութի նախապատրաստումը դատաքննության ընթացքում հետազոտման համար:

Ըստ այդմ, օրենքը կանոնակարգում է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշման **բովանդակությունը**: ԶԴՕ 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քննարկվող որոշմամբ պետք է սահմանվեն՝

1. գործի լուծման համար նշանակություն ունեցող

փաստերը,

2. ապացուցման կարիք չունեցող փաստերը,
3. ապացուցման ենթակա փաստերը,
4. գործին մասնակցող յուրաքանչյուր անձի վրա դրված ապացուցման պարտականությունը,
5. գործին մասնակցող անձանց կողմից ապացույցներ և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու ժամկետը:

Քննարկելով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշման բովանդակությունը՝ հարկ է նշել, որ **գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի, այդ թվում՝ ապացուցման կարիք չունեցող փաստերի և ապացուցման ենթակա փաստերի շրջանակը որոշելը գործը դատաքննության նախապատրաստելու փուլի կենտրոնական խնդիրներից մեկն է** (ՔԴՕ 167 հոդ., մաս 1, կետ 7, 169 հոդ.), որի պատշաճ լուծումը առանցքային նշանակություն ունի գործի քննությունը ճիշտ կազմակերպելու, վարույթի ընթացքը, ուղղվածությունը և բովանդակությունն ուրվագծելու, ինչպես նաև օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտեր կայացնելու տեսանկյունից: Եթե գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի կազմում դատարանը չի ընդգրկում գործը ճիշտ լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստ, դա անխուսափելիորեն հանգեցնում է գործի փաստական հանգամանքները ոչ լրիվ պարզելուն և, որպես հետևանք, չհիմնավորված դատական ակտի կայացման: Եվ ընդհակառակը, տվյալ գործի լուծման համար նշանակություն չունեցող փաստերի անհարկի հետազոտումը, ապացուցման ոչ ենթակա փաստերն ապացուցման առարկայի մեջ ընդգրկելը և հետազոտելն

ուղղակի հակասության մեջ է մտնում դատական ինստիտուցիայի սկզբունքի հետ՝ հանգեցնելով դատարանի և գործին մասնակցող անձանց ժամանակի և ռեսուրսների անհարկի վատնման, իսկ հաճախ նաև ոչ արդարադատական ակտի կայացման:

Նկատի ունենալով նշվածը, ինչպես նաև այն, որ գործը քննող դատարանն է կրում վարույթի բնականոն ընթացքը և կողմերի մրցակցությունը պատշաճորեն կազմակերպելու, առանց արդարադատության շահերին վնասելու՝ ողջամիտ ժամկետում և նվազագույն դատական ծախսերի կատարմամբ գործը քննելու և լուծելու պարտականությունը՝ օրենսդիրը հենց նրա վրա է դրել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի, այդ թվում՝ ապացուցման կարիք չունեցող փաստերի և ապացուցման ենթակա փաստերի շրջանակը որոշելու բեռը:

Կանոնավոր ընթացքով զարգացող գործի շրջանակներում ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը, որպես կանոն, չի փոփոխվում: Այդուհանդերձ, օրենքը նախատեսում է այն **փոփոխելու հնարավորություն**:

Օրենսգրքի 169-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանը կարող է մինչև նախնական դատական նիստի ավարտը, ըստ անհրաժեշտության, փոփոխել ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը: Զննարկվող որոշումը գործը դատաքննության նախապատրաստելու փուլում փոփոխելու հնարավորությունը գործնականում դատարանին թույլ է տալիս ոչ միայն ուղղել

սեփական սխալներն ու բացթողումները, այլ նաև ապացուցման գործընթացը կազմակերպելիս հաշվի առնել դատավարական իրավիճակի փոփոխությունը, որը կարող է պայմանավորված լինել դատավարության տվյալ փուլում թույլատրելի կամ անհրաժեշտ դատավարական գործողությունների կատարմամբ (օրինակ՝ երրորդ անձի հայցի հարուցում, կողմի փոխարինում, այլ անձի ներգրավում, բացառիկ դեպքերում նոր փաստերի ընդունում, ներկայացված գրավոր ապացույցների իսկության վիճարկում և այլն):

Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը բացառիկ դեպքերում կարող է փոփոխվել նաև նախնական դատական նիստի ավարտից հետո, եթե դրա անհրաժեշտությունն առաջացել է դատաքննության փուլում կատարված թույլատրելի դատավարական գործողությունների կամ միջնորդությունների քննության արդյունքում (ՔԴՕ 1 69 հոդ., մաս 5):

Օրենքն ուղղակիորեն չի սահմանում ապացուցման պարտականությունը բաշխելու կամ այն փոփոխելու մասին **որոշման ձևը**: ՔԴՕ 169-րդ հոդվածի 6-րդ մասի բովանդակությունից բխում է, որ նշված որոշումները կարող են կայացվել դատական նիստի ընթացքում՝ արձանագրային որոշման ձևով: Միևնույն ժամանակ օրենքը նախատեսում է հետևյալ պայմանները, որոնց առկայության դեպքում քննարկվող որոշումը պետք է կայացվի առանձին ակտի ձևով և եռօրյա ժամկետում ուղարկվի գործին մասնակցող բոլոր անձանց.

1. գործին մասնակցող անձը կամ նրա ներկայացուցիչը չի ներկայացել այն դատական նիստին, որի ընթացքում դատարանը կայացրել է ապացուցման

պարտականությունը բաշխելու կամ այն փոփոխելու մասին որոշումը (ՔԴՕ 169 հոդ., մաս 6),

2. դատարանի որոշումն ընդունվել է դատական նիստից դուրս (ՔԴՕ 199 հոդ., մաս 1, կետ 2):

Չատուկ վարույթներում գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը (ապացուցման առարկան) որոշելու և ապացուցման բեռը բաշխելու դատավարական կարգը կախված է գործը նախնական դատական նիստով կամ առանց նման նիստ հրավիրելու քննելու հանգամանքից:

Այն դեպքերում, երբ դատարանը, հատուկ վարույթի գործը նշանակում է դատաքննության առանց նախնական դատական նիստ հրավիրելու, ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելու հարցը լիովին գտնվում է նրա հայեցողության շրջանակներում: Չետևում է, որ նման դեպքերում դատարանը կարող է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում չկայացնել, եթե ակնհայտ է, որ գործին մասնակցող անձինք հստակ պատկերացում ունեն գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակի, ապացուցման ենթակա փաստերի, այդ փաստերի ապացուցման պարտականությունը կրելու հանգամանքի մասին կամ այդ պատկերացումը կարող է ձևավորվել գործին մասնակցող անձանց հետ նշված հարցերը դատաքննության ընթացքում քննարկելու և այդ կապակցությամբ իրենց դատավարական իրավունքները և պարտականությունները պարզաբանելու միջոցով: Չակառակ պարագայում քննարկվող որոշումը կայացվում է դատաքննության ընթացքում:

Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում չի կայացվում **ոչ հայցային այն վարույթներով**, որոնք, դատավարական օրենսդրության

համաձայն, սովորաբար քննվում և լուծվում են գրավոր ընթացակարգով՝ առանց դատական նիստ հրավիրելու: Ու թեև քննարկվող գործերով դատարանը մի շարք դեպքերում իրավասու է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով հրավիրելու դատական նիստ, որի ընթացքում կարող են քննարկվել նաև ապացուցման առարկան, այս կամ այն փաստի ապացուցման պարտականության, ներկայացված ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության հարցերը, ֆորմալ առումով դրանց ձևակերպումը կատարվում է գործով կայացված եզրափակիչ դատական ակտի շրջանակներում: Դա պայմանավորված է նախ քննարկվող կատեգորիաների գործերի լուծման համար օրենքով կրճատ ժամկետներ սահմանված լինելու հանգամանքով (որոնք փաստացի բացառում են այդ ընթացքում ընդհանուր հայցային վարույթի կանոններով ապացուցման գործընթացի կազմակերպումը) և ապա՝ այն հանգամանքով, որ առանց դատական նիստ հրավիրելու քննվող բոլոր վարույթներում փաստական և ապացուցողական նյութը գործին մասնակցող անձինք պարտավոր են ներկայացնել վարույթի հարուցման հիմք հանդիսացող դիմումին և դրա դեմ ներկայացվող պատասխանին կից: Բացի դրանից, հարկ է նկատի ունենալ, որ նշված կատեգորիայի գործերով այլ է հրավիրվող դատական նիստի նպատակը. ԶԴՕ-ի՝ համապատասխան վարույթները կարգավորող դրույթներից ուղղակիորեն բխում է, որ դատարանը կարող է հրավիրել դատական նիստ, եթե դա թելադրված է գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների և գործում առկա ապացույցների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու, այլ ոչ ապացուցման բեռը բաշխելու և

ապացուցողական նյութի ներկայացումը կազմակերպելու անհրաժեշտությամբ:

Ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում չի կայացվում նաև այն դեպքերում, երբ դատարանը կիրառում է քաղաքացիական գործերի քննության **պարզեցված ընթացակարգ** (հեռակա դատաքննություն, պարզեցված վարույթ կամ արագացված դատաքննություն): Դա բխում է այդ վարույթների պարզեցված բնույթից(ի թիվս այլի, վարույթը պարզեցվում է նաև դրա հաշվին): Նման որոշում կայացնելու անհրաժեշտություն կարող է ծագել բացառապես այն դեպքերում, երբ դատարանն օրենքով նախատեսված հիմքերով դադարեցնում է պարզեցված համապատասխան ընթացակարգի կիրառումը և որոշում է կայացնում գործի քննությունն ընդհանուր կարգով շարունակելու մասին:

Հարկ է նկատել, որ ապացուցման պարտականությունը բաշխելու մասին դատարանի որոշումը կայացնելուց հետո, որպես կանոն, օրենսդիրն արգելում է գործին մասնակցող անձանց կողմից՝ իրենց նյութափրավական պահանջները և առարկությունները հիմնավորելու նպատակով նոր փաստ վկայակոչելը: Սակայն միևնույն ժամանակ որոշակի բացառություններ են նախատեսվել, երբ՝

1. նոր փաստ վկայակոչելու անհրաժեշտությունն առաջացել է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումը կայացնելուց հետո Օրենսգրքով նախատեսված կարգով կատարված դատավարական գործողության կամ միջնորդության բավարարման արդյունքով.
2. նոր փաստ վկայակոչող անձը հիմնավորում է տվյալ փաստը մինչ այդ վկայակոչելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:

Նպատակ հետապնդելով վարույթի սկզբնական փուլում ապահովելու գործով կողմերի իրական դիրքորոշումների բացահայտումը, ինչպես նաև այն ամրապնդող փաստական նյութն օպերատիվ ձևով և հնարավորինս լրիվ ծավալով հավաքելու հնարավորությունը և այդ առումով կարևորելով ապացուցման պարտականությունը բաշխելու որոշման դերը՝ օրենսդիրը հստակ սահմանել է նաև այն դատավարական գործողությունների շրջանակը, որոնք կարող են կատարվել մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը: Դրանք են՝

1. Օրենսգրքի 21-րդ կամ 22-րդ հոդվածով սահմանված ընդդատության կանոնների խախտմամբ վարույթ ընդունված գործը տվյալ դատարանում քննելու վերաբերյալ պատասխանողի կողմից առարկություն ներկայացնելը,
2. վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկերկայացնող երրորդ անձանց կողմից հայցադիմում ներկայացնելու միջոցով գործի մեջմտնելը, բացառությամբ Օրենսգրքի 40-42-րդ գլուխներով նախատեսված կարգով քննվող գործերի,
3. հայցադիմումի պատասխան ներկայացնելը,
4. հայցային վաղեմություն կիրառելու միջնորդություն ներկայացնելը,
5. հայցի առարկան և/կամ հիմքը փոփոխելը,
6. պատասխանողի կողմից հակընդդեմ հայց ներկայացնելը,
7. գործին մասնակցող անձի կողմից գործին մասնակցող այլ անձի ներկայացրած գրավոր ապացույցի ոչ իսկական լինելու մասին հայտարարելը,
8. առաջին ատյանի դատարանի կողմից իր վարույթում քննվող մի քանի միատեսակ գործերը մեկ վարույթում միացնելը, միացված

պահանջներից մեկը կամ մի քանիսը առանձին վարույթներում առանձնացնելը և այլն:

Հայցային վաղեմություն կիրառելու միջնորդության քննությունը նախնական դատական նիստում:

Հայցային վաղեմությունը խախտված քաղաքացիական իրավունքների դատական պաշտպանություն հայցելու համար պետության կողմից երաշխավորված ժամանակահատվածն է, որի լրանալը, սակայն, չի զրկում իրավատիրոջը հայց հարուցելու իրավունքից, սակայն դատավիճողանձի կողմից այդ փաստի վկայակոչումն ինքնուրույն հիմք է հայցը մերժելու համար:

Օրենսդիրը, կարևորելով դատավարական ինսյորդության սկզբունքի ապահովման անհրաժեշտությունը, ինչպես նաև այն հանգամանքը, որ հայցային վաղեմության ժամկետի լրացած լինելու դեպքում գործի ըստ էության քննությանն ու լուծմանն ուղղված դատարանի և դատավարության մասնակիցների գործողությունները դառնում են ինքնանպատակ, Օրենսգիրքը 168-րդ հոդվածով սահմանել է այդ միջնորդության ներկայացման հնարավորություն, որպես կանոն, մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու որոշում կայացնելը, բացառիկ դեպքերում՝ մինչև դատաքննության ավարտը՝ այդպիսով սահմանելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածում ամրագրված հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը մինչև վճռի կայացումը ներկայացնելու ժամկետից տարբերվող այլ՝ հատուկ ժամկետ:



Հայցային վաղեմության կիրառման մասին միջնորդության քննարկման դատավարական կարգի վերաբերյալ կարգավորումների համակցությունը թույլ է տալիս հանգելու այն եզրակացության, որ այն քաղաքացիական դատավարության փուլերի տրամաբանությանը համահունչ ունի միջնորդության քննարկման նախապատրաստության և միջնորդության քննարկման փուլեր: Մասնավորապես, նման միջնորդության, իսկ դրա դեմ առարկություն բերվելու դեպքում՝ նաև առարկության հիման վրա դատարանը նախնական դատական նիստում⁷

1. որոշում է միջնորդության լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը,
2. գործին մասնակցող անձանց միջև բաշխում է միջնորդության լուծման համար նշանակություն ունեցող փաստերի ապացուցման պարտականությունը,
3. գործին մասնակցող անձանց հետ քննարկում է նրանց կողմից ապացույցներ ներկայացնելու համար ժամկետ տրամադրելու հարցը և անհրաժեշտության դեպքում սահմանում է ապացույցներ ներկայացնելու ժամկետը,
4. որոշում է հայցային վաղեմություն կիրառելու միջնորդությունը տվյալ կամ հաջորդ դատական նիստում քննելու հարցը՝ հաշվի առնելով գործին մասնակցող անձանց կարծիքը,
5. իրականացնում է հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդության արդյունավետ քննությանն ուղղված այլ գործողություններ:

Հարկ է նկատել, որ հայցային վաղեմություն կիրառելու հիմքերի բացակայության դեպքում դատարանը

⁷Հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը նախնական դատական նիստից դուրս ներկայացվելու դեպքում օրենսդիրը չի կարգավորել հենց այն քննելու համար նիստի հրավիրման հարցը՝ հարցի լուծումը թողնելով գործով հրավիրված նախնական դատական նիստին:

որոշում է կայացնում հայցային վաղեմությունը կիրառելու միջնորդությունը մերժելու և գործի քննությունը վեր սկսելու մասին՝ նշանակելով նախնական դատական նիստի ժամանակը և վայրը, իսկ հայցային վաղեմություն կիրառելու հիմքերի առկայության դեպքում դատարանը վճիռ է կայացնում հայցը մերժելու մասին՝ առանց անդրադառնալու գործի այլ փաստերի հաստատմանը և գնահատմանը:

Այս առումով, հարկ է քննարկման առարկա դարձնել իրավակիրառ պրակտիկայում հանդիպող այն պնդումը, համաձայն որի՝ հայցային վաղեմության ժամկետի լրացած լինելու փաստի հաստատումն անհրաժեշտ է դիտարկել որպես վեճի դատական կարգով քննելու իրավունքի դադարում, և այս հիմքն անհրաժեշտ է նախատեսել որպես գործի վարույթը կարճելու հիմք⁸:

Ապացույցները հավաքելը, դրանց վերաբերելիության և թույլատրելիության ստուգումը:

Գործին մասնակցող անձանց կողմից ապացույցներ և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելը (ապացույցները հավաքելու) էական նշանակություն ունի գործը դատաքննության նախապատրաստելու փուլի համար:

Հարկ է արձանագրել, որ Օրենսգրքով ոչ միայն սահմանվել է կողմերի պահանջների և առարկությունների «հաստատման ծանրությունը»

⁸Առավել մանրամասն տե՛ս **S.Ա. Մարկոսյան**, Հայցային վաղեմության ինստիտուտը դատավարական ինստիտուտի սկզբունքի համատեքստում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2019, 2(2) Էջ 250-261, http://ysu.am/files/19Tigran_Markosyan.pdf:

կատարելու ժամկետ (այն է՝ մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը), այլ նաև էապես կատարելագործվել են ապացուցման պարտականությունը կատարելու նպատակով իրենց պահանջների և առարկությունների հիմքում ընկած փաստերը հաստատող ապացույցները և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդությունները դատարան ներկայացնելու կանոնները:

Նախնական դատական նիստով նախապատրաստվող գործի շրջանակներում դատավարության քննարկվող ենթափուլը հաջորդում է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմանը և, ընդհանուր կանոնի ուժով, պետք է ավարտվի այդ որոշմամբ սահմանված ժամկետի լրացմամբ:

Հարկ է նկատել, որ նախկին օրենսգրքով ապացուցողական նյութը դատարան ներկայացնելու համար հստակ ժամկետային սահմանափակումների բացակայությունը կողմերին տալիս էր ապացույցները և դրանք ձեռքբերելու միջնորդությունները ուշ կամ մաս-մաս ներկայացնելու, վարույթը, այդ թվում՝ գործի նախապատրաստումը դիտավորյալ ձգձգելու հնարավորություն: Որոշակի ժամկետային սահմանափակումների բացակայությունը պարարտ հող էր ստեղծում դատարանի կողմից գործն անփույթ նախապատրաստելու համար և բացասաբար էր անդրադառնում կողմերի դատավարական զգոնության և կարգապահության վրա⁹:

⁹ Այդ մասին մանրամասն տե՛ս **Մեղրյան Ս. Գ.**, *Ընդհանուր հայցային վարույթի կարգով քննվող գործերով դատավարական նյութը հավաքելու (ներկայացնելու) կառուցակարգը քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագծում, Դատական իշխանություն, Եր., 2017, թիվ 1-2, էջ 68-77:*

Վարույթը ճիշտ կազմակերպելու, ապացուցողական նյութը ժամանակին՝ մինչև նախնական դատական նիստի ավարտը ներկայացնելուն դրդելու և կողմերի դատավարական կարգապահության մակարդակը բարձրացնելու համար օրենսդիրը նոր օրենսգրքի շրջանակներում նախատեսել է ապացույցները և դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդությունները ներկայացնելու ժամկետային սահմանափակումների հավասարակշռված, որոշակի և կանխատեսելի կառուցակարգ, այդ թվում՝ սահմանված ժամկետների խախտմամբ ապացուցողական նյութը դատարան ներկայացնելու դատավարական հետևանքներ:

Առաջին հերթին, Օրենսգիրքը հրաժարվել է հայցադիմումին և հայցադիմումի պատասխանին կից կողմի տիրապետության ներքո գտնվող բոլոր վկայակոչված ապացույցները ներկայացնելու՝ նախկին օրենսգրքի պահանջից: Նման մոտեցման հիմքում դրվել է այն տրամաբանությունը, որ քանի դեռ դատարանն իր որոշմամբ չի սահմանել ապացուցման առարկան, չի բաշխել ապացուցման բեռը՝ կողմերի համար որոշակիացնելով թե ով և որ փաստըն ապացուցելու համար պետք է ներկայացնի ապացույցներ, վարույթի տվյալ փուլում ապացույցներ ներկայացնելու պահանջը ոչնչով հիմնավորված չէ:

Այնուհետև, Օրենսգիրքը 63-րդ հոդվածը որպես ապացույցներ, ինչպես նաև դրանք ձեռք բերելուն ուղղված միջնորդություններ ներկայացնելու վերջնաժամկետ սահմանել է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ սահմանված ժամկետի ավարտը: Ըստ հիշյալ հոդվածի 2-րդ մասի՝ **գործին մասնակցող անձը պարտավոր է մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու**

մասին որոշմամբ սահմանված ժամկետի ավարտն առաջին ատյանի դատարանի և գործին մասնակցող մյուս անձանց առջև բացահայտել ու հնարավորության դեպքում նրանց տրամադրել տվյալ պահին իրեն հայտնի այն ապացույցները, որոնց վրա նա հղում է կատարում որպես իր պահանջների և առարկությունների ապացուցման հիմք:

Ընդ որում, ապացույցները դատարանի կողմից սահմանված ժամկետում ներկայացնելու պարտականությունն օրենսդիրն ամրապնդել է դատավարական սանկցիայով, այն է՝ որպես ընդհանուր կանոն, ժամկետի խախտմամբ ներկայացված ապացույցները, անկախ գործի համար դրանց նշանակությունից, չեն ընդունվում: ԲԴՕ 63-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «Առաջին ատյանի դատարանն ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո գործին մասնակցող անձի ներկայացրած լրացուցիչ ապացույցն ընդունում է, իսկ ապացույց ձեռք բերելուն ուղղված միջնորդությունը բավարարում է, եթե դրանք ներկայացնողը հիմնավորում է դատարանի կողմից սահմանված ժամկետում տվյալ ապացույցը կամ միջնորդությունը ներկայացնելու անհնարիտությունը՝ իրենից անկախ պատճառներով»:

Նշված իրավադրույթների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ օրենսդիրը, որպես ընդհանուր կանոն, արգելում է գործին մասնակցող անձանց գործի դատաքննության ընթացքում հղում կատարելու այն ապացույցներին, որոնք նախօրոք չեն բացահայտվել: Ընդ որում, այդ արգելքը վերաբերում է և՛ այն դեպքերին, երբ գործին մասնակցող անձը կրում է ապացուցման պարտականություն, և՛ այն դեպքերին, երբ ապացույցը ներկայացնելիս նման պարտականություն չկրող անձն իրականացնում

Է ապացույցներ կայացնելու իր իրավունքը: **Նախօրոք (դատարանի կողմից սահմանված ժամկետում) չբացահայտված ապացույցները, ընդհանուր կանոնի համաձայն, դատարանն իրավունք չունի ընդունել, հետազոտել և դնել վճռի հիմքում: Նման ապացույցները Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով պետք է դիտարկվեն որպես արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցներ, որոնց օգտագործումն արգելվում է:**

Հատկանշական է, որ, ի տարբերություն նախկին ԲԴՕ-ի, նոր դատավարական օրենքն ապացույցներ կայացնելու կարգը (ներառյալ ժամկետային սահմանափակումները) ուղղակիորեն տարածում է նաև ապացույցներ ձեռք բերելուն ուղղված միջնորդությունների վրա (ապացույցներ պահանջելու, վկա կանչելու, կողմին որպես վկա հարցաքննելու, փորձաքննություն նշանակելու (ներառյալ լրացուցիչ կամ կրկնակի), մասնագետ ներգրավելու, տեղազննություն կատարելու մասին և այլն): **Ապացուցողական նյութի ձեռքբերմանն ուղղված միջնորդությունները ևս պետք է ներկայացվեն մինչև ապացուցման պարտականություն բաշխելու մասին որոշմամբ սահմանված ժամկետի ավարտը, հակառակ պարագայում նման միջնորդություն ներկայացնող անձը պետք է հիմնավորի դատարանի կողմից սահմանված ժամկետում տվյալ միջնորդությունը ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով:**

Օրենքով նախատեսված դեպքերում ապացույցներ ձեռքբերելուն ուղղված որոշ միջնորդություններ էլ կարող են ներկայացվել մինչև նախնական դատական նիստի ավարտը: Այսպես, գործը պատշաճորեն դատաքննության նախապատրաստելու և

դատաքննությունն անխափան իրականացնելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով Օրենսգրքի 89-րդ հոդվածով նախատեսվել են փորձագետի եզրակացության դեմ առարկելու՝ գործին մասնակցող անձի իրավունքի իրականացման ժամանակային սահմանափակումներ: Մասնավորապես ըստ գործող կարգավորումների, եզրակացությունը ստացած գործին մասնակցող անձը դրա վերաբերյալ գրավոր առարկությունը պարտավոր է առաջին ատյանի դատարանին ներկայացնել մինչև նախնական դատական նիստի ավարտը, բացառությամբ այն դեպքերի, երբ առարկելու հիմքերն ի հայտ են եկել դատաքննության ընթացքում կամ առարկություն ներկայացնողը հիմնավորում է սահմանված ժամկետում այն ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով: Նշանակում է, որ ընդհանուր կանոնի համաձայն, գործը դատաքննության նախապատրաստելու փուլում ստացված եզրակացության արժանահավատության և լրիվության վերաբերյալ առարկությունները, ինչպես նաև նշված ենթադրյալ թերությունները (կասկածները) վերացնելուն ուղղված միջնորդությունները գործին մասնակցող անձը պետք է ներկայացնի մինչև նախնական դատական նիստի ավարտը: Նշված սահմանափակումը կիրառելի չէ այն դեպքերում, երբ, օրինակ, եզրակացության արժանահավատության և լրիվության վերաբերյալ կասկածները կողմի մոտ առաջանում են դատական նիստում փորձագետի հարցաքննության կամ այլ ապացույցների հետազոտման ընթացքում (առարկելու հիմքերն ի հայտ են եկել դատաքննության ընթացքում) կամ առարկող կողմը հիմնավորում է, որ իրենից անկախ պատճառներով զրկված է եղել սահմանված ժամկետում եզրակացության դեմ առարկելու հնարավորությունից (իրեն չի ուղարկվել եզրակացության օրինակը, գործի քննությանը ներգրավվել է

հետագայում, այլ օբյեկտիվ պատճառներով անհնար է եղել ներկայացնել առարկություն, դատարանը գործը դատաքննության է նախապատրաստել առանց նախնական դատական նիստ նշանակելու):

Ներկայացված **ապացույցների վերաբերելիության և թույլատրելիության հարցը** գործին մասնակցող անձանց հետ քննարկելը և լուծելը Օրենսգրքով նախատեսված է որպես նախնական դատական նիստում լուծման ենթակա հարց, որի քննարկումը և լուծումը պետք է հաջորդի ապացույցների հավաքելու ենթափուլին և նախնական դատական նիստն ավարտելուն: Ըստ այդմ, գործին մասնակցող անձանց կողմից դատարաններ կայացված ամբողջ ապացուցողական նյութից դատարանը պարտավոր է ընտրել միայն այն ապացույցները, որոնք վերաբերում են գործին, «ուևակ» են հաստատել գործի համար նշանակություն ունեցող փաստերը, անհրաժեշտ են ու առերևույթ բավարար հիմնավորված դատական ակտ կայացնելու համար: Ընդ որում, նման «ընտրությունը» կարող է կատարվել նախևառաջ նախնական դատական նիստում, որը պետք է անցկացվի ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ ապացույցներ ներկայացնելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո:

Օրենսգրքի մի շարք հոդվածների և դատական պրակտիկայի վերլուծության հիման վրա կարելի է եզրակացնել, որ դատարանը պարտավոր է ապացույցի վերաբերելիության և թույլատրելիության հարցերին անդրադառնալ և դրանք լուծել ինչպես ապացույցը ներկայացնելու կամ ձեռք բերելու վերաբերյալ միջնորդությունը քննարկելու պահին, այնպես էլ վարույթի հետագա ընթացքում՝ ընդհուպ մինչև գործով եզրափակիչ դատական ակտ կայացնելը:

Այլ կերպ ասած՝ ներկայացվող ապացուցողական նյութի գտումը վերաբերելիության և թույլատրելիության հատկանիշով իրականացվում է երկու փուլով՝

- **Նախնական գտում**՝ գործում արդեն առկա կամ միջնորդությամբ ներկայացված ապացույցը թույլատրելու հարցը լուծելիս, իսկ եթե ներկայացվել է ապացույց ձեռք բերելուն ուղղված միջնորդություն՝ այն քննարկելիս.
- **վերջնական գտում**՝ գործով եզրափակիչ դատական ակտ կայացնելիս՝ բոլոր ապացույցների հետազոտման ու դրանք համակցության մեջ գնահատելու արդյունքում:

Սկզբնական դատավարական փաստաթղթերին կից և նախնական դատական նիստում ներկայացված (հավաքված) ապացուցողական նյութի նախնական գտումը և դատաքննությամբ հետազոտման ենթակա ապացույցների շրջանակն ու հետազոտման հաջորդականությունը որոշելը կարելի է դիտարկել որպես նախնական դատական նիստի եզրափակիչ խնդիրներ, որոնց լուծմամբ հնարավոր է արձանագրել, որ գործը պատրաստ է դատաքննության (հիմնական լսումների):

Գործող Օրենսգրքի կարևոր նորույթներից է այն, որ օրենսդիրը գործը դատաքննության նախապատրաստող դատարանին վերապահել է ներկայացված ապացույցները նախնական դատական նիստում հետազոտելու լիազորություն, այնքանով, որքանով դա անհրաժեշտ է գործի դատաքննության արդյունավետ նախապատրաստություն իրականացնելու, այդ թվում՝ ապացուցողական նյութի գտումը վերաբերելիության և թույլատրելիության հատկանիշով իրականացնելու և դատաքննությամբ հետազոտման ենթակա ապացույցների շրջանակը որոշելու համար (Օրենսգրքի 167 հոդվ., մաս 2):

Մինչև նախնական դատական նիստի ավարտը կատարվող գործողություններ:

Օրենսդիրը, հստակ սահմանել է նաև այլ դատավարական գործողությունների շրջանակը, որոնք պետք է կատարվեն մինչև նախնական դատական նիստի ավարտը: Դրանք են՝

1. հայցվորի համաձայնությամբ ոչ պատասխանողի փոխարինումը պատշաճ պատասխանողով, եթե պարզվում է, որ հայցը հարուցվել է ոչ այն անձի դեմ, որը պետք է պատասխանի այդ հայցով,
2. նոր պատասխանող ներգրավելը,
3. առաջին ատյանի դատարանում դատավորի կողմից ինքնաբացարկ հայտնելը, կամ նրան բացարկ հայտնելը, բացառությամբ այն դեպքի, երբ այն հայտնող անձը հիմնավորում է, որին քնաբացարկի կամ բացարկի հիմքը ծագել կամ իրեն հայտնի է դարձել նախնական դատական նիստի ավարտից հետո և մինչև այդ չէր կարող հայտնի լինել (վերջին դեպքում տվյալ գործողությունը կարող է կատարվել մինչև դատաքննության ավարտը),
4. գործին մասնակցող անձի կողմից փորձագետի եզրակացության վերաբերյալ գրավոր առարկություն ներկայացնելը, բացառությամբ այն դեպքերի, երբ առարկելու հիմքերն ի հայտ են եկել դատաքննության ընթացքում, կամ առարկություն ներկայացնողը հիմնավորում է սահմանված ժամկետում այն ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով,
5. գործին մասնակցող անձի ներկայացրած փորձագետի եզրակացությունով այն տված փորձագետի կողմից դատարանի առջև գրավոր հաստատելը:

Ստորև սխեմատիկ ամփոփ ձևով ներկայացված են նախնական դատական նիստում կատարվող գործողությունների դատավարական նշանակությունը և դրանց

1. **Մեղրյան Ս. Գ.**, Ընդհանուր հայցային վարույթի կարգով քննվող գործերով դատավարական նյութը հավաքելու (ներկայացնելու) կառուցակարգը քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագծում, Դատական իշխանություն, Եր., 2017թ.:
2. **Մեղրյան Ս. Գ.**, [Ապացուցումը և ապացույցները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, Արդարադատության ակադեմիա, Եր., 2020թ.:](#)
3. **Մարկոսյան Տ. Ա.**, [Հայցային վաղեմության ինստիտուտը դատավարական ինսյորդության սկզբունքի համատեքստում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2019թ.](#)
4. Վճռաբեկ դատարանի [ԵԿԴ/0930/02/13 քաղաքացիական գործով 22.04.2016թ. և թիվ ԳԴ4/0504/02/14 քաղաքացիական գործով 22.04.2016թ. որոշումները:](#)
5. Քաղաքացիական դատավարության անդրազգային ՈՆՆԻԴՐՈՒՄ սկզբունքներ:



Լրացուցիչ մեդիա-նյութերը նախատեսված են Ձեզ հետաքրքրող նյութի մասին հավելյալ գիտելիքներ ստանալու համար: